

ՀԱՊԻՆԻ ՄԱՐԲԻՆ

ՇԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՂԷՔՍԱՆԴՐ ԲԷՆ

ՊՐՕՖԵՍՈՐԻ ՏՐԱՄԵԲԼՆՈՒԹԵԱՆ ԷԲԵՐԴԻՆԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԵՆԻ

(Եւրոպական Ս. Ս.)

Ըստ այսմ կենթադրութեան մեր երևակայեցնելու եմք մեզ, եթէ որեւի՛ միջի բոլոր յորձանքներն բոլորովին կհաւասարակշռեն միմեանց և եթէ յընթացք քանի մի ժամանակաց ո՛չ մի յորձանք չ'ծագիլ, ո՛չ կզօրեղանայ և ո՛չ կթուլանայ, ուրեմն ճանաչողութիւնն կամ զգացողութիւնն է իրրև մի զրոյ 0. Հոգին կլինի հանգստեան մեջ, եթէ այդ հաւասարակշռութիւնն կկանգարի՝ ճանաչողութիւնն առ ժամանակ կկարծնի, յետագայ խանգարումն հաւասարակշռութեան կտայ նորան նոր բնդհարումն և ինչ այդ զանազանակերպ գրգռմանց ժամանակն, որք կգործեն արմնութեան միջոցին, խոչընդոտ կլինի հաւասարակշռութեան վերականգմանն, Հաճեմաւ նմին է փոփոխական բնաւորութիւնն հոգեկան գործունեութեան, ճանաչողութեան ընթացքն կարելի է առաւել նմանեցնել մի կարգ ճայմանքի քան խաղաղ մշտական հեղեղատի, Երբ մեզ կթուի թէ հանգստեան մեջ եմք, այդ կը յուսանայ աննշան և չափաւոր գրգռումներից, երբ որ զգացման ուժգնութիւնն կաճի՝ նոյն ժամայն կյայտնուի պարբերական բնաւորութիւնն ճանաչողութեան:

Մեր ներկայ տեղեկութիւններով կարելի է մեծաբար յայտնել կարծիքն այս երկու հակադիր կենթադրութեանց մասին, յօգուտ միոյն կամ միւսոյն: Մեր սպասելու եմք (experimentum crucis) և դուցէ ո՛չ այն և ո՛չ միւսն չեն արտայայտել գործոյ ճշմարիտ գրութիւնն:

Նախընթաց գատողութիւնքն կվերաբերին վերաբերութեան օրինաց կապակցուած ճանաչողութեան հետ: Բայց ի թիւս պարզ և իրական օրինակաց հոգեկան երևութից՝ որ այժմ՝ կքննեմք, կայ այլևս մի հանդամանք, որոյ վերայ թեքեալ չեմք գործուցել ուշադրութիւն: Մեր նկատեցիներ, որ ամենայն ապաւորութիւն՝ շարունակօրէն մի որոշեալ ժամանակ՝ կթուլանայ, բայց բնութենցինք, թէ՛ պատշաճաւոր հանգստութիւնից և բնդհատումից յետոյ՝ այս ապաւորութիւնն կարող է վերանորոգիլ միևնոյն նախկին պարզութեամբն:

Ասկայն բնդհանուր փորձերից յայտնի է, որ ոչ մի կրկնումն որ և իցէ գրգռման թէ հաճոյականին, կամ անհաճոյականին կամ չեզոքին, բնաւ չեն անել այնպիսի ապաւորութիւն՝ ինչպէս առաջին նուազն, եթէ անգամ ջրղերն ունենային իսկապէս ժամանակ հագստանալոյ նուազութիւնից, Բւրաքանչիւր ապաւորութիւն կթուլանայ երբ կկրկնուի: Գորանով կյայտնուին հանրածանօթ օրէնքն նորութեան:

Հաւաստի է՝ որ մէք այս տեղ ունիմք գործ միմիայն վերաբերութեան օրինաց նոր բարդ ժամանակակէտի հետ (Փաշ) և կամ տարբերութեան հետ՝

որ կայ երկու գրութեանց մէջ, Կեր ներկայացնելու մեզ, որ ջղային համակարգութիւնն կ'յարմարի իւրաքանչիւր նոր գրութեան, ստանալով (օգնականութեամբ յիշողականութեան) հաստատուն հետք, որ նոր ընդհարումով այդ յարմարութիւնն կ'ներգործէ, պահանջնելով տարբերութիւնն որ կայ այդ նոր տպագրութեան և ջղային համակարգութեան նախնի մաց գրութեան մէջն:

Չկայ կարեւորութիւն անցանել քան զսահմանն այդ ընդհանուր ցուցման, Գինչև ճշտօրէն յայտնի չլինի թէ ջղերն ի՞նչ կերպիւ կ'ործեն ի դէպս հասարակ փոխանցման մի տպագրութիւնից դէպի միւսն, և չառնելով ի կշռագատութիւն երկար ժամանակեայ յարմարութիւնն, չէ կարելի յուսալ պարզարանել առաւել բարդեալ դեպքերն:

ՕՐԷՆՔ ՏԱՐԱՆՄԱՆ:

Երբ տպագրութեան կհետեւի զգացումն՝ ծագեալ յորձանքներն ազատօրէն կտարածին ուղեղի մէջ և առ հասարակ կորդոնեն շարժողական գործարաններն, ընդ նմին կ'յուզեն և ներքինն մարդոյ:

Հակառակ նմին՝ անդրացողական կամ անդրադարձական (Рефлективный) անուանեալ շարժմանց (շնչառութեան, կլանման) չհետեւի որ և իցէ զգացումն և համեմատ նմին՝ այն շարժումներն կկատարին միմիայն սահմանափակեալ շրջանի մէջ:

Աս չկամիմ առել թէ ամենայն նրաթերիքն և ամենայն՝ վանդակներն կը յուզին միանգամայն, բայց կամիմ՝ առել թէ կծագի տարածողական յուզումն, որն բաւականաչափ ուժեղ է, որպէս զի ամբողջ մարմինն շարժէ: Կեր արդէն բաղմակողմանի նկարագրութեամբ քննեցինք թէ ընդհանրապէս ի՞նչ է ջղային գործունէութիւնն: Գրդումն որ կ'ներգործէ զգայութեան վերայ՝ կ'յուզէ զգայական ջիղն: Այդպիսի ճանապարհաւ նա կհասնի որ և իցէ ջղահանդոյցի կեդրոնի և կազատէ այնտեղի առաւել ևս մեծաքանակ ոյժերն, որք կանցնին շարժողական ջղերի միջոցաւ դէպի մկանունքն: Վերջնական փառան ջղերի գրդումանց է շարժումն միանանց, Բայց բաղմամբ միաւորութեանց և հիստուածոց հետ, որք կան գորշագոյն նիւթոյ մէջ՝ զբրգումն հասնելով դէպի մի վանդակն հետզհետէ կտարածուի միւսոց վերայ այնպէս որ, կ'յուզէ միայնգամայն չափազանց շատ շարժիչ ջղերն և նուցանից յառաջացեալ շարժումներն կտարածին չափազանց մեծ շրջանի վերայ: Կեր կզանեմք, որ ճանաչողութիւնն կամ զգացումն կզօրեղանայ իմաստն յուզման տարածման հետ և կեդրոնական վանդակների գրդումն ենթարկուած թուոյ և նորանից ծագած շարժմանց թուոյ աճեցման հետ: Կ դէպս հասարակ գրդումն՝ որն կտարածի միմիայն վանդակաց սահմանափակեալ թուոյ վերայ, և կպատճառէ միայն և եթ հասարակ շարժումն, զգացումն կառնու տակաւին նոր սկզբնաւորութիւն: Կեր կարող չեմք առել թէ՝ ճանաչողութիւնն կամ զգացումն յայդ դէպս իսպառ չկայ, բայց այն կեկրի պարզապէս յայտնուիլ միայն այն ժամանակն երբ յուզումն արդէն փոքր ի շատէ կտարածի փոխադարձ հիստուածողք վանդակաց վերայ: Կեր պար-

տաւոր եմք ընդունել իրրե Տիմնական փառս որ ի միասին ջգային գործունէութեան հետ կձագիւնէ զգաղութնս: Մեր կարող չեմք բանալ կամ գնել ոչ մի սահման ջգային գործունէութեան մէջ որին կհետեւի զգաղութնս և ջգային գործունէութեան մէջ՝ որին չհետեւի զգաղութնս: մեր կարող եմք միայն նշանակել սահման ուժգնութեան: Այսու ամենայնիւ կարելի է ընդունել բաժանումն ջգային գործունէութեան՝ ճանաչողական և անճանաչողական:

Անդրացողական շարժումներն՝ զորօրինակ՝ շնչառութիւնն՝ ներքնակողման շարժումներն՝ սրտի գործունէութիւնն՝ աչաց բորբոքումն կյառաջանան՝ ինչպէս յայտնի է լինանամիջի ուղեգից և նորա անընդմիջական շարունակութիւնից զէպի գլխոյ ազդեղն: նորա չեն սրահանջել զլից ուղեղի մասնակցութիւնն: Այդ շարժողութիւնքն ամփոփուած են անձուկ շրջանի մէջ: զորօրինակ շնչառութիւնքն ամփոփուած են կրծից մէջ, կերակրոյն՝ աղեաց խողովաների մէջ: սրտի արեան շարժումներն՝ սրտի մկանանց մէջ: Այդ շարժողութիւնքն չեն կատարել ճանաչողութեամբ: Այսպէս մեր կտեսնեմք, երբ որ քնած մարդոյ ձեռքին կգային՝ իսկոյն ձեռքն կամ սեղմէ և կամ կշարժէ տեղիցն: Այդ կկոչի անդրացողական գործողութիւն: որ կլինի միջնորդութեամբ ստոր կեդրոնների առանց կողմնակի տարածման կամ հաղորդակցութեան և ուղղաձէ գէպի եղական սահմանափակ խումբն մկանանց: Այդպիսի օրինակներն՝ զոր տեսար յառաջագոյն, սահմանափակութիւնն կախի գործութեան սակաւ ուժգնութենէ: Տարածողական սահմանափակութեան այդ փաստին՝ կհետեւի ճանաչողութեան բացակայ լինելու փաստն: Համեմատեմք այժմ, թէ ի՞նչ իրողութիւնք կյառաջանան ամենազօրեղ զրգումանց միջոցին, զորօրինակ փրաւորուած ձեռքի խիստ ցաւելու միջոցին: Այն ժամանակն եւ կլինի անդրացողական շարժումն ձեռաց, յայց այդ է միայն փոքր մասն ամբողջ երևութիւն: Գարմնոյ բոլոր անգամներն կշարժին, գէմքի գծերն կստանան այլ ձեակերպութիւն: ձայնն կհանէ սուր և թանփանցիկ աղաղակ: ամբողջ մարմինն կենթարկի զրգուման: Բայց գործողութիւնն կը շափաւորի միմիայն մկանանց շարժողութեամբն, գէմքն կկարմրի՝ ցոյց տալով որ արեան շրջանն խանդարուելէ, շնչառութիւն կերպէ կամ ընդհակառակրն կյամբանայ, կցուցանէ ժամանակաւոր կորուսան ախորժակի, որ ստամոքսի գործունէութիւնն խանգարուածէ, կաշոյ գործունէութիւնն կլինի անհաւասարաչափ, եթէ անձնաւորութիւնն է ստնտու կլին՝ կնշանակէ թէ՛ կաթի յատկութիւններն փոխուած են: Այդպիսի ընդարձակ հետեւանքներ կատարելոյ համար, ջգային յորձանքն՝ յառաջացեալքն զրգումանքից, հարկաւոր է լինել ոչ միայն ուժգին այլ չափազանց տարածուելու են ուղեղի մէջ, այնպէս որ, նորա կարողանան հասնել բոլոր համակարգութեանց շարժիչ ջղերի և նոցա շարժել:

Աս ընտրեցի ամենամերժին զէպքն, որպէս զի որքան և հնարաւորեւ առաւել պարզօրէն լուսարանել այդ օրէնքն: Մեր փոխանակ այնր՝ կարողեմք ստնուլ այլ օրինակներ և ցուցանել թէ՛ ուժգնութիւն զգաղման՝ համապատասխան է մերենայական երևութից ուժգնութեան և առիթման համարա-

Քո-լե-ն: Այս երկու երևոյթներն զուգընթաց զօրացումն և թուլացումն են՝ ի թուոյ առօրեայ հետազոտութեանց որոյ վերայ անգամ կհիմնուի գլխաւորապէս մեր եզրակացութիւնն, թէ որպիսի է և որքան մեր մերձաւորների զգացման ոյժն: Գծուարին չէր ապացուցանել, որ այդ օրինաց կարծեցեալ բացառութիւնն՝ չեն իսկապէս բացառութիւնք, որ զգացման խիստ հանգիստ դրութեան կամ ո՛չ այնքան սաստիկ զրգուման ժամանակն՝ տարածողական յուզումն բաւական զօրեղ չէ, որ ստիպեն միանուերնին յայանի առնել իւրեանց գործունէութիւններն, բայց գծուար չէ ապացուցանել որ կամքն, նոյնպէս և սովորութիւնք կարողեն անհետացնել այդ յայանութիւններն, թէ երբ բոլոր համակարգութիւնն կգտնուի ընդ ազդեցութեամբ որ և իցէ այլ զօրեղ տպաւորութեան, որ կընդգիմազրէ նորոգ տարածման, ուրեմն նոր տպաւորութիւններն անզգալի են (զորօրինակ պատերազմի ժամանակն վերք ստանալն անզգալի է) :

Բաւական չեն յառաջ բերեալ օրինակներն՝ կցուցանեմ նա և այն թէ որպիսի ազդեցութիւն ունի սովորութիւնն զգացումն ճնշելոյ վերայ, որպէս զի ցուցանել թէ յամենայն դէպս՝ երբ այդ ճնշող ազդեցութիւնն կերևի, կամաց տարածումն (այսինքն շարժումն) համեմատաբար գծուարացած է և ճնշուած: Երբ մեր առաջին անգամ կիտրձեմք զորօրինակ, զրել, հաշուել երգել, որ և իցէ նուազարանի վերայ, խօսիլ և երբ կանեմք ամե, նատեսակ մարմնական վարժութիւններ, ձեռների բաղմամբ անյարմար և անօգուտ շարժումներներ, կհամապատասխանեն ներքին զգացման, ջանից և գծուարութեանց: Ընդհակառակն՝ երբ մարդ վերին աստիճանի յաջողակ է և վարժ, աշխէն նորա ճանաչողութիւնն բոլորովին չերևիլ և առհասարակ կցուցանէ մարմնոյ հանգստութիւնն, որ ուժոյ բոլոր երևոյթներն կամիտիին այժմ միմիայն այն չրջանի մէջ, որ ամենակարեւոր է ներկայ շարժումն ուղիղ կատարելոյ համար: Այդ է պատուաւորապէս կրթութիւն համանման վերստիշատակեալ սկզբնական անգրագողականութեանց (չնչառութեան ևլն): Այդ նմանութիւնն այնչափ մեծ է, որ ընտեսաներն կոչեցին սովորական շարժողութիւնք երկրորդական անգրագողական կամ ինքնաշարժ շարժողութիւնք: Նշանադիտակի վրայի պահապաններ կրթամանակեայ սովորութեան պատճառան՝ համարեա թէ այլ ևս չենթարկի ոչինչ ջղային ազդեցութեան տակ, բայց միայն կենթարկի ազդեցութեան յօգաւորող գծի, որ կայ ձեռքի որոշ շարժման և որոշ պատկերի մէջ, որ և կցուայ պահապանի աշաց մէջ: Առումնական ճիւղերն յուզման, որն տարածուիլ է նախապէս այն գծի ուղղութեամբ, անհետացան, և այն յուզման արբանեակն՝ որ է ճանաչողութիւնն, այնքան նուազեցաւ, որ հազիւ թէ հետքն կնշմարուին:

Տարածման օրէնքից նոյնպէս կարելի է օգուտ քաղել որպէս զի հաստատել ենթադրական բացատրութիւնն գործողութեան յարմարեցուման, որոյ մասին արդէն յիշուած է վերաբերութեան օրէնքն քննելու ժամանակն: Արկենալ զգացմանց անբաւարար ուժգնութիւնն կախի սակաւ կամ առատ թուլ տարածմանը: Յիշողականութեան ընտան հիմունքների քննութիւնն

(գլուխ Կ) ցոյց կտայ մեզ, որ բոլոր ջղերն ունին ձգտումն. կրկնելու ժամանակն՝ սեղմել իւրեանց դործունէութեան շրջան և միանալ իւրեանց հետևորդ գրութեանց հետ. փոխանակ զգացմանց յանկարծական երևութից՝ զնեյ շարք մտածողութեանց:

Զուգապարելելով այդ երկու օրենքներին վերաբերությունն և տարածման, մեր կստանամք ընդհանուր արտայայտությունն բնական պայմանաց ամենայն ճանաչողությունն, այն է՝ շփոթման և անշփոթման միջև ընկած ընդհանուր օրենքն, որն արտահայտվում է հետևյալ կերպով՝

Մարդկային զգացմանց բոլոր տարրեր ձևերին կհամապատասխանեն, ինչպես մեր ենթադրելու եմք, ուղեղի միջի եղած տարածման տարրերություններն, նույնպես է ինչպես որ նոցա արտաքին երևույթից մեջ եղած տարրերություններն կհամապատասխանեն նոցա, Արտաքին նշաններն կհամապատասխանեն բոլոր աղբյուրներից միմիայն փոքրամասին, որպիսի ազդեցություններն ունին մկանսն և ներքին կազմության վերայ, շատ շարժումներն կստանան սկզբնական զրգումն (Стимул) շատ թույլ գործողություն կատարելոյ համար, (չխօսելով անգամ ճնշող հակաձգուման մասին) և մեծ մասն ներքին փոփոխությունաց ծածկուած են հետազոտողից, Զգային եռանդան ատրածեալ յուղմունքն է ամենահարկաւոր արբանեակ զգացման, նորանից յառաջացած շարժումներն և անդամաց շարժողություններն են ընդհանրական և բազմակողմանի լեղու զգացմանց և են անփոփոխ, յարատեւական, որ շատ նշանաւոր է մարդկայինս բնաւորութեանց բազմատեսակ յինեյոյ ժամանակն:

Եւ իսկցրան ցոյց տուի այդ բանն իբրեւ հիմնական ապացոյց և փաստ յօգուտ անձուի միաւորութեան հոգւոյ և մարմնոյ։ Այդ դասակարգ փաստերն որ առաւելապէս բաց էին մշտական հետազօտութեան համար. սակայն պաշտպաններն ինքնակայութեան և հոգւոյ մարմնէ կամակորոյթեամբ անուշադիր կ'ընդունէին։

Զգացմանց արտայայտություն բաղմատեսակ ձևերն կլինեին չափազանց հետաքրքրական մեր առարկայի հետազոտություն համար, սակայն բառական է. եթե հետեւեալ գլխոյ մէջ ցոյց տամք բառականութեան և անբառականութեան մէջ եղած յատկանիշ տարրերութիւնն:

ՕՐԷՆՔ ԲԱՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆԲԱԻԱԿԱՆՈՒԹԵԱՆ:

Բաւականութիւնն և անբաւականութիւնն ունին յայտնի և որոշ պատ-
ճառներ, նմանապէս յատկանիշ տարբեր արտաքին արտայայտութիւններ,
Հետաքրքրական կլինէր, թէ և թե՞մե խնդիր չէ համախմբել նոցա մի ընդ-
հանուր օրինաց տակ կամ համախմբել օրէնքն զուգընթացութեան, որք կան
հոգւոյ և մարմնոյ մէջն, Սկզբունքն՝ որով կկառավարի առ հասարակ զգա-
ցումն, կենժարկի բաւականին փոփոխութեանց, նայելով թէ արդեօք կըն-
դունէ բնաւորութիւն բաւականութեան կամ անբաւականութեան:

Դա և առաջ արժան է դարձուցանել ուշադրութիւն այն բանի վրայ, որ բաւականութիւնն կամ անբաւականութիւնն բոլորովին հակադիրք են միմե-

